Տեսնելով մեզ, պառաւը եւ Հիւբբին ինչ-որ անծանօթ լեզուով խօսեցին միմեանց հետ: Յետոյ Հիւբբին, իր սովորական նազելի ժպիտը երեսին, մօտեցաւ Ասլանին եւ իր ձեռքի փոքրիկ գաւազանը բարձրացնելով, ասաց.

— Գնի՛ր, պարոն, այդ գաւազանը, դա դիւթական զօրութիւն ունի:

— Ես քեզ կը զրկեմ քո զէնքից, փոքրիկ վիուկս, — ասաց Ասլանը նոյնպէս ժպտալով:

— Ես մի ուրիշը կը շինեմ: Այդ եւս իմ շինածն է:

Ասլանը առեց նրա ձեռքից գաւազանը եւ ընծայեց մի ոսկի: Փոքրիկ վիուկը գլուխ տոեց եւ շնորհակալութեամբ հեռացաւ: Մենք անցանք առանց ցոյց տալու, որ ճանաչում ենք նրանց, եւ որպէս նրանք եւս ցոյց չտոին, թէ ճանաչում են մեզ:

Հասնելով մեր իջեւանը, վարպետ Փանոսին գտանք իր տան դռանը կանգնած: Նա մեզանից մի քանի ժամ առաջ էր վերադարձել Աւանց գիւղից: Երեւում էր, որ նաւաստին պատմել էր նրան մեզ հետ պատահած արկածները թէ՛ ալեկոծութեան ժամանակ եւ թէ՛ անապատում:

— Լսեցի, լաւ թրջոեցա՛ք, — ասաց նա ծիծաղելով:

— Վարդապետները ցամաքացրին մեզ, — պատասխանեց Ասլանը նոյնպէս Ժպտալով:

Նա կանչեց իր աշակերտներին, հրամայեց, որ տեղաւորէն մեր ձիաները: Մենք ներս մտանք:

Ասլանը եւ վարպետ Փանոսը խօսում էին վանքի մասին: Վարպետը հարցնում էր, թէ ինչ տպաւորութիւն գործեցին նրա վրայ աբեղաները, նրանց կեանքը, նրանց սովորութիւնները եւ այլն: Իսկ ես նրանց չէի լսում: Իմ մտքից չէին դուրս գալիս Սուսանը եւ Հիւբբին: Երեւում էր, որ Ասլանի վրայ եւս նրանց անակնկալ յայտնուիլը խիստ ծանր տպաւորութիւն գործեց: Այդ պատճառով խիստ կարճ պատասխաններ էր տալիս վարպետին եւ չէր ուզում խօսակցութիւնը երկարացնել, որպէսզի ինքը ժամանակ ունենայ մտածելու Հիւբբիի եւ Սուսանի մասին: Անպատճառ մի բան պատահած պէտք է լինէր, կամ շատ վատ, կամ շատ լաւ: Բայց մինչեւ ստուգելը այդ գաղտնիքը բաւական պիտի տանջէր թէ՛ ինձ է՛ւ թէ Ասլանին: Սուսանը ոչինչ չասաց Ասլանին: Գուցէ նա ասաց, բայց ես չհասկացայ: Ես զբաղուած էի Հիւբբիով, այդ պատճառով նկատել չկարողացայ, թէ ինչ ակնարկութիւններ արին միմեանց հետ պառաւը եւ Ասլանը: Ես տարակոյս չունէի, որ նրանք շուտով չէին հեռանայ մեր բնակարանի շրջակայքից, եւ մենք գուցէ մի քանի անգամ կը հանդիպէինք նրանց: Բայց հիմա ո՞ւր գնացին նրանք: Խորհրդաւոր գա-